## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2019թ. թիվ 111-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետը, հաշվի առնելով զեկուցագիրը և քաղաքացու դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից աջակցության նպատակով Վանաձոր քաղաքի բնակիչ Մելինե Մանուկյանին հատկացնել 50000 /հիսուն հազար/ դրամ միանվագ օգնություն:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. մարտի 25
ք.Վանաձոր

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա.Ղուկասյանին

Զ ե կ ու ց ա գ ի ր

Հարգելի պարոն Ղուկասյան

Ձեզ է դիմել Մելինե Մանուկյանը՝ իր ընկերուհու Անուշ Աքելյանի մահվան կապակցությամբ ընտանքին դրամական օգնություն տրամադրելու խնդրանքով:

Անուշ Աքելյանը ծանր հիվանդությամբ երկար ժամանակ գամված է եղել անկողնում, ընտանիքը պարտքերի մեջ է և դժվար են հոգում առօրյա ծախսերը: Ներկայումս էլ դրանց ավելացվել են հուղարկավորության ծախսերը: Ընտանիքին տրվելիք օժանդակությունը կփոխանցվիլ մահացողի աղջկան՝ Սոսե Սարուխանյանին:

Առաջարկում եմ Անուշ Աքելյանի ընտանիքին /Մելինե Մանուկյանի միջոցով/ ցուցաբերել 50.000 /հիսուն հազար/ դրամ աջակցություն:

Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա.Մխիթարյան

Վ.Ջաղինյան